

## ՄԱՆԿԵԼ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ. ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ\*

### ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

\* \* \*

Մանվել Առուշանյանի առաջին գիրքը լույս տեսավ 1983 թվականին: Այն բաղկացած էր տասնվեց պատմվածքից: Ի դեպ, գիրքը խմբագրել է Մանվելի համագյուղացին՝ տաղանդավոր արձակագիր ու լրագրող Լևոն Ադյանը, որն այն ժամանակ աշխատում էր Բաքվում հրատարակվող «Գրական Ադրբեջան» հանդեսում՝ որպես արձակի բաժնի վարիչ:

Ժողովածուն բացվում է «Մեր սարերում էլ լույս բացվեց» պատմվածքով, որ ապացուցում է Մանվելի պատմելու շնորհքը, լեզվի հղկվածությունը, պատկերավորությունը: Դա բացատրվում է նրանով, որ նա աշխատել է որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, այսինքն՝ մանկավարժությամբ է բացել գրական-ստեղծագործական աշխատանքի դռները:

Պատմվածքի թեման նորություն չէր տվյալ ժամանակաշրջանի գրական ընթացքի համար: Սովետական ամբողջ գրականության գլխավոր թեմաներից մեկը նախասովետական շրջանին հատուկ հասարակության դասակարգային շերտավորման, աշխատավոր ժողովրդի սոցիալական ծանր պայմանների, քաղաքում կապիտալիստների, գյուղում՝ կալվածատերերի դաժանության, ազատության, անմարդկային վարքագծի պատկերումն էր: Այդ խնդիրն է շոշափված նաև Մանվել Առուշանյանի սույն պատմվածքում:

Գլխավոր կերպարները հակադիր խավերի ներկայացուցիչներ են՝ կալվածատեր Մարկոս աղան և աղքատությունից անտանելի վիճակի մեջ գտնվող գյուղացի Վարդագարը: Վերջինիս երեխաները սոված են, և նա ստիպված դիմում է Մարկոս աղային: Ազահ Մարկոս աղան մի պարկ գարի է փոխ տալիս՝ ամռանը յոթնապատիկ վերադարձնելու վճիռով:

Վարդագարը ջրաղացում ջրաղացպան Գրիգորի հետ գրուցելիս ներկայանում են իրենց համագյուղացիներ Սուխանն ու Վարդանը, որոնք վաղուց աշխատում էին Բաքվում:

Չետաքրքիր հիշողություններ են պատմում նրանք, սակայն մի նորություն լույսի շողի պես լուսավորում ու ջերմացնում է գյուղացիների, այդ թվում և Վարդագարի սրտերը: Պարզվում է, որ Սուխանն ու Վարդագարը բոլշևիկներ են, խոսում են իրենց մոտալուտ հաղթանակի մասին նաև Դարաբաղում, ցույց են տալիս Լենինի նկարը, ոգևորում գյուղացիներին:

Պատմվածքն ավարտվում է բոլշևիկների մուտքով: Գյուղացիները ցնծություն են ապրում՝ լսելով, որ Մարկոս աղան ընտանիքով ծողոպրել է գյուղից, իսկ բոլշևիկները նրա ամբարի հացահատիկը բաժանում են սոված գյուղացիներին: Ուրախ է նաև Վարդագարը:

\* Հոդվածն ընդունվել է 15.07.2013:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ Հայոց լեզվի և գրականության ամբիոնը:

Ինչպես նկարագրում է Մ. Առուշանյանը, գյուղ մտած բոլշևիկների մեծավորը՝ շեկ մագերով մի մարդ, բարձրանում է Մարկոս աղայի տան պատշգամբը և հայտարարում.

- Այ ժողովուրդ, այսուհետև ոչ տեր, ոչ էլ ծառա: Դուք եք ձեր երկրի տերը: Իսկ չարքաշ գյուղացիները, ուրախությունից շիկացած, իրար շշմջում են.
- Վերջապես... մեր սարերում էլ լույս բացվեց:

Սովետահայ գրականության գլխավոր թեմաներից են եղել Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվները: Հայ անվանի գրողներից Ե. Չարենցը, Գ. Մահարին, Մ. Արմենը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Ջորյանը, Ն. Ջորյանը և ուրիշներ 1920-30-ական թվականներին տպագրել են բազմաթիվ պոեմներ, բալլադներ, վեպեր, վիպակներ, պատմվածքներ, դրամատիկական երկեր՝ արտացոլելով այն անհմաստ ու ազգակործան կռիվները, որ բողբոջվել էին դաշնակցական և բոլշևիկյան կուսակցությունների միջև: Դրանք անհմաստ և ազգակործան ենք համարում, որովհետև 1915 թվականի ահավոր ցեղասպանություն տեսած ժողովրդին փոխանակ հուսավառելու, միաբանելու, փրկելու, վերածնելու, ընդհակառակը, այդ երկու ազդեցիկ կուսակցությունները գնալով թեժացրին պայքարը միմյանց դեմ: Բոլշևիկները տապալեցին դաշնակցականներին և խլեցին իշխանությունը: Սակայն նրանք, փոխանակ կռալիցիոն կառավարություն կազմելու, դաժանորեն վարվեցին դաշնակցական մտավորականության հետ, բանտերում որոշ հայտնի գործիչների կացնահարեցին, շատերին արտաքսեցին երկրից, ՀՅԴ կուսակցությունը դարձավ վտարանդի: Այս առիթով քիչ բանավեճեր չեն ծավալվել առանձնապես Անհատի պաշտամունքը քննադատելուց հետո: Ոմանք արդարացրել են կոմունիստներին, ոմանք՝ դաշնակցությանը՝ մոռանալով, որ Հայոց Հեղափոխական Դաշնակցության կուսակցությունը 1918 թվականի մայիսին կարողացել էր իր շուրջը համախմբել կիսակործան Հայաստանի փշուր-փշուր ուժերին, կազմակերպել Սարդարապատի ճակատամարտը թուրքական հրոսակների դեմ, ոչ միայն ապահովել հաղթանակը, այլև վերականգնել ավելի քան 600 տարի կործանված հայոց պետականությունը, վարել մի շարք կռիվներ հարևան երկրների՝ Ադրբեջանում իշխող մուսավաթականների, Վրաստանում՝ մենշևիկների ոտնձգությունների դեմ և ապահովել նոր ազգափրկիչ գործընթացը: Սակայն ճշմարտությունը պահանջում է նշել, որ, անցնելով իշխանության գլուխ, կոմունիստներն ամեն դեպքում կարողացան ապահովել Սովետական Հայաստանի տնտեսական, հասարակական, մշակութային, գիտական զարգացման հիմքերը, նպաստել դրանց զարգացմանը:

Այլ ճակատագիր վիճակվեց Մեծ Հայքի 10-րդ նահանգը հանդիսացող Արցախին: Լենինի ու Ստալինի թուրքամետ քաղաքականության արդյունքում Հայոց Արցախը նետվեց նորաթուխ Ադրբեջանի հայակուլ երախը: Խորհրդային 70 տարիների ընթացքում Ադրբեջանի կառավարող շրջանները վարեցին Արցախի հայաթափման քաղաքականություն: Արցախի բոլոր գրողներն ականատես էին դրան, ինչ-որ տեղ ըմբոստանում էին, ինչ-որ տեղ՝ լռում: Աստիճանաբար ծնվեց ու ծավալվեց, վերածվեց Արցախյան ազգային-ազատագրական պայքարի, որն էլ իր հերթին, դարձավ Արցախյան պատերազմ՝ պարտադրված Ադրբեջանի կողմից:

Մեր նպատակից դուրս է տվյալ խնդրի քննարկումը մանրամասնորեն: Սա-

կայն հնարավոր չէ շրջանցել մի կարևոր հիմնախնդիր, որը կապված է Արցախում ստեղծվող գրականության շոշափած թեմաների հետ: Ուստի մինչև 1988 թվականն ստեղծված գրական այն երկերում, որոնցում շոշափված է Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած քաղաքացիական կռիվների թեման, նկատվում են ստանդարտ, միակողմանի լուծումներ: Այսինքն՝ Արցախում սովետական կարգերի հաղթանակն առնչվում է պրոլետարական Բաքվում կոփված հայ բոլշևիկների գործունեության և 11-րդ կարմիր բանակի հաղթական մուտքի հետ:

Այս գաղափարաբանությունը նկատվում է խորհրդային տարիներին՝ մինչև 1988 թվականը տպագրված գեղարվեստական երկերի մեծ մասում: Այլ կերպ հնարավոր չէր լինել, որովհետև Արցախում ապրող և ստեղծագործող գրողները գտնվում էին եռակի մամլիչի տակ՝ մի կողմից Մոսկվայից ստացված հրահանգները՝ սոցիալիստական ռեալիզմի պահանջով, որը խրախուսում էր «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» գրականության արարումը, մյուս կողմից՝ Ադրբեջանի կառավարող շրջանների անընդմեջ վերահսկողությունը ՊԿԿ-ի հանրապետական և մարզային կառույցների միջոցով, վերջապես կուսակցության Ադրբեջանի Կենտկոմի մարզային դրածոների վախժարած ու անհեռանկար վերաբերմունքը:

Նման իրավիճակում էր գտնվում ու ստեղծագործում ճանաչված մանկավարժ Մանվել Առուշանյանը: Ու երբեք պատահական չպետք է համարել այն երևույթը, որ նրա առաջին իսկ գրական երախայրիքը բացվում է **«Մեր սարերում էլ լույս բացվեց»** և **«Ծիածանը լեռներում»** պատմվածքներով, որոնցում միևնույն թեման է՝ նույն լուծումներով ու գաղափարաբանությամբ: Եթե առաջինում խոսք չկա դաշնակցականների և կոմունիստների հակամարտության մասին, ապա «Ծիածանը լեռներում» ստեղծագործության մեջ բոլշևիկների սուր սվինն ուղղված է խմբապետ Բագրատի ու նրա «տղաների» դեմ: Այստեղ խոսքը պատմվածքի գեղարվեստական մակարդակի մասին չէ, որն, ի դեպ, բավականին հաջողված է, այլ նրա գաղափարական բովանդակության: Հեղինակը դարաբաղյան խոսքային կոլորիտի և շոշափելի բնապատկերների շնորհիվ, հիրավի, ընթերցողի սեղանին է դրել պատմվածքի ժանրային պահանջները բավարարող երկ: Սակայն կերպարների բնութագրման եղանակներն ու նպատակամղումն անչափ սրված են՝ առանձնապես դաշնակցական խմբապետ Բագրատի կերպարի առումով: Բագրատը ներկայացված է որպես հակաժողովրդական գործունեություն ծավալած մի դաժան հրեշ, որը միայն պաշտպանում է Մարկոս աղայի, քյոխվա Սիմոնի ու տեր Սուքիասի նման հարուստ, մեծ հողատարածքներ ունեցող, իրենց իսկ սեփական ժողովրդին հալածող տարրերին: Եվ թվարկած հարուստներն էլ բոլոր աղետներից իրենց փրկող ուժը համարում են խմբապետ Բագրատին: Իսկ երբ Բագրատը պահանջում է, որ Ձորագյուղի տղամարդիկ միանան իրեն՝ բոլշևիկների դեմ կռվի մեկնելու, գյուղացի Սեյրանանց Թևանն ընդդիմանում է: Նա, չհանդուրժելով Թևանի դժգոհությունը, իսկույննեթ հանում է մաուզերը և բոլորի աչքի առաջ գնդակահարում նրան:

Դեպքերը ծավալվում են արագընթաց: Խմբապետ Բագրատը, որ նորից վերադարձել էր գյուղ, իր համախոհ հարուստների օգնությամբ կրակի է մատնում Վարդունց Նիկոլայի և Սահականց Ջավադի դարադամները: Իսկ տեր Սուքիասը, խաչը ձեռքին, խրախուսում էր խմբապետին: Բագրատի դաժանություններն

ավելի են ծավալվում: Նա որոշում է Ներսեսին և Անդրոյին կախաղան բարձրացնել, իսկ մնացածներին ամբոխի առաջ զնդակահարել: Նրա կողմն էր անցել նաև զգիր Սարուխանը: Դեպքերի և իրադարձությունների սրընթաց փոփոխությունների համապատկերի վրա ինչքան ծայրահեղ դաժանությունների է դիմում խմբապետը, այնքան հակադրվում է նրան ժողովուրդը, որը հեղեղի մեծան լցվել էր եկեղեցու բակը: Եվ հանկարծ տեղատարափ անձրևից հետո գյուղի երկնակամարում ձգվում է երկու ծիածան՝ խորհրդանշելով կարմիր զինվորների մուտքը գյուղ՝ բոլշևիկների գլխավորությամբ:

Պատմվածքի հեղինակը, հիրավի, խոսում պատկերներով ներկայացնում է բոլշևիկների հաղթանակը, որի պատճառով խմբապետ Բագրատը փոխանակ հանձնվելու, մաուզերից նախ մահացու վիրավորում է ռուս սպա Մատվեյին, սպա ինքնասպանություն գործում: Իսկ զուռնա-դիոլի որոտընդոստ նվագի տակ բարձրահասակ ու թիկնեղ ռուսը ելնում է մի բարձրադիր քարի և դիմում գյուղացիներին.

- Բարեկամներ, հարազատներ: Մենք կտրել ենք երկար ճանապարհ, հաղթահարել ենք բազում դժվարություններ և այսօր հեռավոր Ռուսիայից ազատությունը հասցրել ենք ձեր լեռնաշխարհը, էլ ոչ բեկ, ոչ խան, ոչ տեր, ոչ էլ ծառա: Այսուհետև դուք եք ձեր երկրի տերն ու տնօրենը»: Ոգևորելով ժողովրդին՝ ռուսական բոլշևիկ սպան բացականչում է. **«Լենին, դրուժբա, սվոբոդա...»:**

Իսկ ինչպես հեղինակն է եզրափակում պատմվածքը, «Յեռվից խաղաղ ժպտում էր արևը, և գյուղի գլխավերևում կամար էր կապել կանաչ-կարմիր ծիածանը» [1]:

«Ծիածանը լեռներում» պատմվածքն այսօր մտորումների տեղիք է տալիս մի շարք առումներով: Նախ, նրանում ընդհանրացված գաղափարը բխում է սովետական տարիների գաղափարաբանությունից, այսինքն՝ լենինյան բոլշևիկյան կուսակցությունն էր, որ եկավ փրկելու ոչ միայն ԽՍՀՄ ժողովուրդներին, այլ նաև աշխարհը: Նման պարտադրող գաղափարաբանությունից չէին կարող խուսափել գրողները, այդպես և արցախցի Մանվել Առուշանյանը: Երկրորդ, սովետական շրջանում ստեղծագործող հայ գրողները ներքուստ համոզված էին, որ Արցախն ու Նախիջևանը Ադրբեջանին հանձնելը քաղաքական ավանտյուրա էր, հայ ժողովրդի դեմ կատարված մեծագույն հանցագործություններից մեկը: Բայց կարող էին, արդյոք, այդ տազնապալից զգացումը բերել գրականություն, թեկուզև բարձրաձայնել ի լուր աշխարհի: Այդ գրողների թվում էր նաև Մանվել Առուշանյանը:

Մինչև 1988 թվականը Ադրբեջանի կառավարող շրջանները հայաթափ էին անում նաև Արցախը: Այդ մասին արդեն խոսել ենք: Բայց ոչ մի հայ գրող չի համարձակվել այդ երևույթը ներկայացնել իր գրական գործերում:

Սակայն եկավ պահը... 1988-ի փետրվարից սկսած, Արցախի ըմբոստ հայ բնակչությունը, դեռևս հավատալով լենինյան կուսակցությանը, Ստեփանակերտի փողոցներում, շքերթներում բացականչեց. **«Լենին, պարտիա, Գորբաչով»**՝ ասես արձագանքելով Մ. Առուշանյանի ստեղծած ռուս այն սպայի կերպարին, որն արցախյան Չորագյուղում ոգևորված բացականչել է. «Լենին, պարտիա, սվոբոդա»: Որպես ճշմարիտ արվեստագետ՝ Մ. Առուշանյանը ձգտել է նկարագրել իր ապրած ժամանակաշրջանն այնպես, ինչպես... լսել է ականատեսներից՝

անշուշտ, բուլշևիկյան պրոպագանդայի պարտադրված սահմաններում, որտեղից էլ ծնունդ է առել գռեհիկ հասարակաբանությունը: Ահա հենց այս դիտակետից պետք է գնահատել գրողի սույն պատմվածքը, որի պատկերավորությունն, ամեն դեպքում, արժանի է լուրջ ուշադրության: Բերենք մի հաջող բնապատկեր պատմվածքից. «ժայռակատարներին մթամած ամպերը միանգամից խրվեցին իրար մեջ, ծանրացան գյուղի վրա: Խուլ որոտաց երկինքը: Հրի շիթեր արծակելով՝ ճայթեց կայծակը, և գյուղի վրա միանգամից սկսեց թափվել մայիսյան հորդ անձրևը: Ասես քրհեղեղ էր: Հեղեղատները լեռնալանջերից կատաղած ցած էին գլորվում: Գյուղամիջյան գետակը խենթությամբ վշշում էր, քշում էր հսկայական ժայռաքարեր, արմատահան արված ծառեր: Խուլ դղրոյուն էր լսվում, ասես քանդվում, փլվում էին երկինքն ու երկիրը: Չորագյուղում դեռ այդպիսի անձրև չէր եղել» [2]:

Մեծ Հայրենականից հետո պատերազմական թեման առաջնակարգ տեղ գրավեց սովետական գրականության մեջ: Հայ գրողները ևս լրջորեն արծագանքեցին օրվա պահանջներին: Ե՛վ Հայաստանում, և՛ Արցախում բանաստեղծներն ու արձակագիրները հրատարակեցին ոչ քիչ վեպեր, վիպակներ, պոեմներ, բանաստեղծական շարքեր: Մ. Առուշանյանի ստեղծագործության մեջ ևս նկատելի տեղ գրավեց ակտուալ այդ թեմայի արձարժումը: Այդ տեսակետից ուշագրավ են նրա **«Մի բուռ հող»**, **«Պապիս ու տատիս որբուկները»**, **«Ամեն ինչ տեսնում էր»** և այլ պատմվածքներ: Այդ գործերը գրված են մտքի և սրտի համաձույլ ջերմությամբ: Դրանք սովորական պատումներ չեն, այլ արձակ բանաստեղծություններ, որոնցում հանդես են բերվում անձնուրաց հայրենասերներ՝ իրենց մեծ հայրենիքի ու սեփական ժողովրդի ազատության համար մարտնչող քաջագուններ: Համոզիչ ու անմիջական, ճշմարիտ ու սիրտ պարուրող պատկերներով Առուշանյանը ոչ թե խոսում է իր հերոսների մասին, այլ ստեղծում է կենդանի, լիարյուն կերպարներ, որոնք ընթերցողին տանում են դեպի ռազմի դաշտ, ուր կենաց ու մահու կռիվ էր ընթանում հիտլերյան ֆաշիստների դեմ:

Հարագատ մնալով ռեալիզմի կենսական սկզբունքներին՝ Մանվելը կարողացել է իր կերպարների մեջ հայրենիքի հանդեպ սերը զուգակցել ընտանիքի, սիրո, ընկերության սուրբ զգացումներին: Այսպես՝ պատերազմից ութ տարի հետո Ռուսաստան է մեկնում Աթա ապերը, գնում է զոհված որդու՝ Արմենի մարտական ընկերոջ՝ Ալեքսեյի մոտ՝ միասին այցելելու այն վայրը, ուր նահատակվել է հողին է հանձնվել շքանշանների ասպետ որդին: Ե՛վ Թյուրիսյան անտառում՝ փոքրիկ մի բացատում, Ալեքսեյը ցույց է տալիս այն հողաթումբը, որի տակ հավերժորեն ննջում է հերոս որդին: Տարիներ անց Ալեքսեյը մանրամասն պատմում է, թե ինչպես է ծանր վիրավոր Արմենին հասցրել բացատ, սակայն, ավաղ, չի կարողացել փրկել հայ ընկերոջ կյանքը: Ալեքսեյը վերհիշում է Արմենի խնդրանքը՝ գնալ-տեսնել ծնողներին և անպայման իր սիրած աղջկան՝ Հասմիկին պատվիրել, որ չսպասի իրեն: Սրտառուչ այս պատմությունը լսելով՝ Արմենի հայրը, որ ելել էր Ղարաբաղից, իր հետ բերել էր մի բուռ հող, ցանել որդու շիրմին: Դա Արմենի ցանկությունն էր: Նա մահվանից առաջ խնդրել էր Ալեքսեյին, որ կենդանի մնալու դեպքում Ղարաբաղից մի բուռ հող բերի, ցանի իր շիրմին, որ ինքը «հայրենի հողի տակ հանգիստ քնի»: Ալեքսեյը Արմենի հոր միջոցով կատարել էր զինվոր ընկերոջ ցանկությունը: Իսկ անտառի բացատում, որդու շիրմից հեռա-

նալուց առաջ Աթա ապերը հայրաբար գրկում է Ալեքսեյին և ասում. «Այսուհետև դու իմ որդին ես, իմ բալան»:

Այս պատումի մեջ չափազանցված ոչինչ չկա: 1945-ից հետո արցախցի շատ հայրեր, մայրեր, քույրեր, եղբայրներ իրենց զոհված հարազատների հետքերով գնացել են ու գտել նրանց շիրիմները կամ այն հուշարձանները, որոնց վրա փորագրված են եղել նրանց անունները: Ահա իրական` այսպիսի մի իրական-գեղարվեստական պատկեր է Առուշանյանի «Մի բուռ հող» պատմվածքը, որ հնարավոր չէ կարդալ առանց հուզմունքի:

Պատերազմական թեմատիկայի շրջանակներում **«Ամեն ինչ տեսնում էր»** պատմվածքում Մանվելը շոշափում է մարդկային փոխհարաբերությունների մի բարդ, անձնուրացություն պահանջող խնդիր` դարձյալ պատերազմական պայմանների հրամայականով: Ղարաբաղցի Արամն այն հազարավոր հայրենակիցներից էր, որ մեկնեց ռազմաճակատ` փրկելու մարդկության գալիքը ֆաշիզմի դեղին ժանտախտից: Մարտադաշտում թշնամու անսպասելի ռմբակոծությունից ծանր վիրավորվում է նա` կորցնելով տեսողությունը: Բժիշկների ջանքերը հաջողությամբ չեն պսակվում: Ամենածանր պահին զինվորական հոսպիտալ է այցելում նրա սիրելի կինը` Արուսյակը, որն անչափ գոհ էր հոսպիտալի ռուս բժիշկներից ու բուժքույրերից: Արամը կնոջ հետ վերադառնում է հայրենի գյուղ, բացվում է նաև մայրսպան հաղթանակի օրը: Եվ, ինչպես նկարագրում է հեղինակը, «Ամեն առավոտ ձեռնափայտով, սև ակնոցներն աչքերին, նա շրջում էր գյուղամիջյան փողոցներով, զնայլվում կառուցող մուրճերի երաժշտությամբ, նա հրճվանք էր ապրում... Թվում էր, թե տեսնում է. «Այո, ամեն ինչ նա տեսնում էր արդեն... հոգով» [3]:

Ինչ վերաբերում է **«Պապիս ու տատիս որբուկները»** պատմվածքին, նրանում հեղինակը բավականին խոստումնալից հնարանքներով արծարծել է ժողովուրդների բարեկամության դրսևորումները ռազմաճակատի թիկունքում, առանց որի հնարավոր չէր լինի Մեծ Հաղթանակը: Պատմվածքի հերոս-հեղինակը պատմում է այն մասին, որ աղբբեջանցի մայրագուրկ երեխաներին, որոնց հայրը մարտնչում էր ռազմաճակատում, իր երվանդ պապն ու բարեսիրտ տատը խնամում են: Դրանք եղբայր ու քույր Ահմեդն ու Ջուլեյխան էին: «Անցնում էին օրերը,- պատմում է հեղինակը,- մեծանում էին արդեն կյանքից հեռացած իր պապի ու տատի որբուկները:

Առաջին կորուսյալ սիրո սրտառուչ մի պատմություն է **«Իմ առաջին սերը»** պատմվածքը: Համաշխարհային զրականության մեջ բազմիցս շոշափված այս թեման գտել է իր պատկերը նաև դարաբաղցի մանկավարժ-գրող Մանվել Առուշանյանի մեկնաբանմամբ: Պատմվածքում չկա մի ավելորդ բառ, իր տեղը չգտած մի նախադասություն: Հերոսի ապրումները ծփում են լեռնային աղբյուրից գոյացած ջինջ լճակի ալիքների պես: Գյուղական պատանին, որ սովորում է 10-րդ դասարանում, իսկ Գոհարը` 9-րդում, երազային սիրով հանդիպում են Տանձուտի ձորում: Սակայն չեն արժանանում միմյանց, որովհետև Գոհարի ծնողները, լքելով հայրենի գյուղը, տեղափոխվում են քաղաք:

Սիրո այս պատումն այնքան բնական է, այնքան անմիջական և այնքան հանդիչ, որ թվում է, թե ընթերցում ես ոչ թե քնարական հերոսի պատմությունը, այլ մտքի թևերով հասնում ես քո պատանեկության օրերին և տեսնում ինքդ քեզ ու

քո Առաջին սերը:

Մ. Առուշանյանի հաջողությունն այս պատմվածքում այն է, որ հերոսի զուլայ ապրումները ներկայացվում են արցախյան բնապատկերների խոսուն համաձուլվածքով: Բերենք մի բնապատկեր պատմվածքից. «Մտքիս աչքերով տեսնում եմ Գոհարին, որի կրակոտ աչքերն ասես զուլայ ջրով լիքը թասի մեջ սուզված թուխ-թուխ խաղողի հատիկներ լինեին: Տեսնում եմ նրա ուներին թափված ծուփ-ծուփ մետաքսաման մագերը: Կարծես լսում եմ նրա նուրբ ու փափուկ ձայնը: Սթափվում եմ մտքերից: Լռությունը օղակում է շուրջս: Աչքերս հառում եմ աստղերին: Գտնում եմ նրա աստղը: Անէացած՝ փորձում եմ գրուցել հետը, բայց այդ խորհրդավոր պահին, այդ խորհրդավոր լռության մեջ Տանձուտի ծորից մի դայլայլ է հնչում: Ես այդպիսի սրտաճնլիկ հնչյուններ չէի լսել: Ինչպիսի՞ մեղմություն... Ինչպիսի՞ նրբին տվայտանքներ... Գուցե սիրուց խաբված սոխակ է կամ մի այլ թռչուն: Չգիտեմ: Ես այդպիսի հեծկլտանք չէի լսել: Նա մերթ սրտաճնլիկ կանչում է, մերթ կարծես աղերսում է ու լալիս: Տանձուտի ծորը լցվել էր հուր ու բոցով: Թվում էր, թե բնությունն աշխարհի ամբողջ թախիծն ու տառապանքը խտացրել է այդ փոքրիկ հավքի փոքրիկ սրտում: Թվում էր, թե այդ իմ սիրտն էր հավքի բերանով ողբում Տանձուտի ծորում: Թվում էր, թե այդ ես եմ կրակված սրտով որոնում Գոհարին: Իմ հրեշտակ, իմ ցնորք Գոհարին...» [4]:

Մարդկային ապրումների և բնապատկերների մի համանվագ կարելի է համարել Մանվելի «Արտասվող ծաղիկը» արձակ բանաստեղծությունը: Թեման կրկին պատերազմական իրադարձություններից վերցված կոնկրետ մի պատում է, որը ներկայացված է կոմպոզիցիոն շրջանակի վարպետ օգտագործմամբ: Տխուր է պատմությունը, արցունքաբեր, այնպես, ինչպես Ծաղկաբլուրի լանջերին բուսնող Յուդաժաղիկը, որը կոչում են նաև Արտասվող ծաղիկ: Սովորական ծաղիկ չէ այն, ինչպես պատկերում է հեղինակը. «Թեև մի գարուն է ապրում, բայց ամեն գարնան վերստին հարություն է առնում և ամեն գարնան արտասվում է... Ծամփորդները անտարբեր անցել են: Ծամփորդները անցնում և չեն նկատում, որ ծամփեզրի ծաղիկն արտասվում է: Ատամնավոր եզրերով տերևներ ունի, նուրբ աչքեր, նուրբ աղվամազով ցողուն, և ցողունի ծայրին կապոլյոտ-կապոլյոտ ծաղիկ՝ մեջը ցողով լիքը: Իսկ և իսկ կապոլյոտ աչք՝ արտասուքով լիքը: Ամեն առավոտ բյուրեղյա կաթիլները պսակաթերթերից, ինչպես թարթիչներից, ընկնում ու մեռնում են մայր հողի վրա: Չե՞ք հավատում, Եկեք գնանք Ծաղկաբլուր, և ես ձեզ ցույց կտամ արտասվող ծաղիկը» [5]:

Եվ հեղինակը տանում է ընթերցողին ոչ թե ցույց տալու արտասվող ծաղիկը, այլ գյուղ, ուր Մանաս դայու միակ տղան՝ Արտավազը, մեկնում էր ռազմաճակատ: Գյուղի ծայրին հավաքվել էին գյուղացիները, նրանց մեջ Արտավազը՝ ինչպես ուռենիների անտառում երիտասարդ չինարին:

Մանվել Առուշանյանը՝ որպես նրբանկատ, հոգեբան-գրող, խոսքի երանգներով արտահայտում է այն ծնողների տազնապն ու միամտության հասնող հավատը, որ Արտավազը բանակում կարող է հանդիպել իրենց զինվոր զավակներին: Այսպես՝ «Դանիել ապին, շաղված աչքերը հառելով Արտավազի դեմքին, դողացող մատներով սեղմեց նրա մեջքը ու տրտնջալով ասաց. «Բոյիդ մեռնեմ, Արտավազ, թե որ Դոսևեփիս ֆրոնտում տեսնես, ասա՝ ապին, բոլորը լավ են, արխային մնա»: «Որ Գևորգն աչքովդ ընկնի,- պաղատանքով պատվիրեց Սաթենիկ

մայրիկը,- ասա՝ երեխեքը սաղ-սալամաթ են, թող չմտածի...»: Մանաս դային վերջին անգամ համբուրեց որդու ճակատը և արցունքները հազիվ զսպելով՝ թախանձագին ասաց. «Բալաս, ճամփադ բարի...»: Թաքի բիբին ձեռքերը երկարեց հեռու բլրագագաթին, թփերի մեջ հազիվ երևացող խարխուլված մատուռի կողմը ու աղերսանքով մրմնջաց. «Երեսս ոտքերիդ տակը, ա Նահատակ, թե որ Արտավազդն ինձ բախշես, հոգիս քեզ դուրբան: Նա խլեղի փեշերը ֆռռացնելով փաթաթվեց որդու պարանոցով և երկար ժամանակ չէր ուզում բաժանվել» [6]:

Սակայն պատումի կիզակետը պիտի բռնկվի Ծաղկաբլուրի անտառամիջյան ճանապարհին, ուր Արտավազդի սիրած աղջիկը՝ Արևհատը, սպասում է նրան: Ժողովրդի մեջ նա ամաչում էր մոտենալ սիրած տղային և ասել հրաժեշտի խոսքը: Նրանց հանդիպման նկարագրությունը ևս ապացուցում է, որ հանձին Մ. Առուշանյանի՝ Արցախի գրական ընտանիքն ունեցել է աստվածաշնորհ գրողներից մեկին: «Հրաժեշտի պահին,- գրում է հեղինակը,- Արևհատը մի թաշկինակ հանեց և ծալքերի մեջ չորացած յուղածաղկի դեղին ծաղիկները ցույց տալով, ասաց. «Տեսնո՞ւմ ես ինչ անուշ բուրմունք ունեն: Ամեն անգամ կբացես, հոտ կքաշես ու կհիշես ինձ... Կհիշես Ծաղկաբլուրը, այնտեղ ես միշտ կսպասեմ քո վերադարձին» [7]:

Արտառուչ այս տեսարանին հաջորդում են Արտավազդի հրաժեշտի նկարագրությունը, գերմանացիների դեմ մղած նրա մարտերի պատկերը՝ վաշտի հրամանատար Յուրչենկոյի գլխավորությամբ: Արտավազդը որպես սակրավոր աչքի է ընկնում հմտությամբ, մասնագիտական վարպետությամբ: Վնասագերծելով գերմանացիների կողմից ականապատված ճանապարհը՝ նա ապահովում է սովետական զինվորների հաղթական առաջընթացը: Սակայն վերջին ականը վնասագերծելիս գերմանական հեռահար թնդանոթի արկի բեկորներից պայթում է ականը, կրճից վիրավորվում է Արտավազդը և զոհվում՝ իր զինվորական պարտքը կատարելիս: Դժվար է առանց խորին զգացմունքի կարդալ պատումի այս մասը՝ «խոշտանգված դաշտի կանաչների մեջ հավերժական քնով պառկել էր Արտավազդը: Նրա աչքերի մեջ սառել էր հեռու-հեռուներում սպասող սիրած աղջկա կարոտը: Աջ թևը մնացել էր կրճից, իսկ ափի մեջ արյունոտված թաշկինակից թափվել, մակարդված արյան հետ սառել էին յուղածաղկի դեղին թերթիկները...» [8]:

Իսկ ոչ պակաս սրտառուչ մի պատկեր է ստեղծված Արտավազդի սիրած աղջկա՝ Արևհատի ճակատագրի մասին, որը կրկին ու կրկին հաստատում է պատերազմների հակամարդկային էությունը:

Տարիների շարաններում Արևհատը հուսահատ սպասում էր իր Առաջին Սիրուն: Հետո նա անհետանում է, թե ուր, ոչ ոք չիմացավ: Իսկ Ծաղկաբլուրի ճամփեզրին Յուղածաղիկն ասես ամեն գարնան լացում էր հենց Արտավազդի ու Արևհատի կորուսյալ սիրո համար:

Հայ գրականության մեջ կենդանիների վարքն ու բարքը պատկերելու ավանդույթը բավականին ճանապարհ է անցել: Առանձնապես մեծ է Հ. Թումանյանի դերն այդ բնագավառում: Հետթումանյանական շրջանի անվանի գրողները, որոնք զարգացրել են Մեծ Լոռեցու ավանդույթը, Ստեփան Չորյանն ու Վախթանգ Անանյանն են: Այս տեսակետից կուզենայինք նշել Մ. Առուշանյանի փորձերը, որ պսակվել են հաջողությամբ: Սակայն մի երանգ, որ գրավել է մեզ և կարե-



լի է համարել ներդրում այդ ասպարեզում, այն է, որ մեր գրողները ձգտել են ասպացուցելու առանձնապես շան հավատարմությունը տիրոջը՝ մարդուն: Մանվելն ընդհակառակը, իր «Վերջին հրաժեշտը» պատմվածքում գեղագետի հմտությամբ ցույց է տալիս տիրոջ՝ մարդու հավատարմությունն ու երախտագիտական զգացումն իր շան հանդեպ: Դա շատ կարևոր նրբանկատություն է, որ դրսևորել է գրողը:

Նկարագրվող դեպքը տեղի է ունենում Արծաթասարում, ցրտաշունչ մի օր: Սարերում աշուն էր: Նոր էին քոչել սարվորները: Հովվական փարախները մնացել էին դատարկ: Սարում, փարախում մնացել էր միայն երկար տարիների հովվական փորձ ունեցող Հանեսը: Մեռնում էր հավատարիմ շունը՝ ծեր Բողարը: Հանեսը ծիգ ու ջանք չի խնայում, խարույկ է վառում, տաքացնում է Բողարին, գուցե շունը տաքանա, ոտքի կանգնի: Բայց իզուր, շունը մահամերձ էր:

Մ. Առուշանյանն այնպիսի անմիջականությամբ և հոգեբանական նրբանկատությամբ է պատկերում Հանեսի և շան խորհրդավոր զրույցն ու հայացքների փոխանակումը, որ մնում է միայն երանությամբ հիշել նրան և գնահատել արժանվույնս: Բերենք մի հատված պատումի այդ մասից: «Հովիվը շոյեց շան գլուխը, շունը ցածրացավ»:

- Վեր կաց, Բողար, գոնե տուն գնայինք:

Բողարն անհույս նայեց, և մարդը նրա հայացքում կարդաց.

- Չեմ կարող, եղբայր, թողիր ու գնա:

- Դե որ չես կարող... Ես էլ չեմ կարող...»:

Եվ Հանեսը իր հավատարիմ շանը չի լքում, չուլ է զցում վրան, որ չմրսի: Փարախի մոտիկ քարին նստած Հանեսը մտաբերում է երեսուն տարվա իրենց մտերմությունը, իրար օգնող ջանքերը սարերում և տափաստաններում: Հիշում է, թե ոնց Բողարն իրեն փրկեց արջի ծանկերից, վիհից՝ սայթաքման պահին, օգնեց՝ զագաններից անվտանգ ու անվնաս պահել ոչխարի հոտը: Ոչինչ չի մոռանում Հանեսը, նորից է մոտենում ու դիմում շանը. «Դե վեր կաց, Բողար, գոնե տուն գնայինք»: Եվ ասես լսում է պատասխանը. «Չեմ կարող, եղբայր, թողիր ու գնա»:

Հանեսը սարում Բողարին չթողեց մենակ՝ աշխարհին հրաժեշտ տալիս: Եվ երբ Բողարը փչեց շունչը, Հանեսի սիրտը փուլ եկավ, ասես աշխարհը մեկեն սևացավ, և կյանքում առաջին անգամ արցունքներ ծորացին խորշոնած դեմքով ու դանդաղ սահելով՝ ընկան Բողարի փափկամազ մեջքին: Պատկերն ավարտվում է այսպես. «Քաշաթուխպը սարերում խտացավ: Մանրահատիկ անձրևը միալար մաղում էր: Գլխիկոր կանգնել էր հովիվ Հանեսը և աղոթքի պես մի բան էր շշուշում... Վերջին հրաժեշտն էր տալիս հավատարիմ ընկերոջը՝ Բողարին» [9]:

Չափազանցություն չենք համարի, եթե ընդգծենք, որ Մանվելի սույն պատմվածքը կարող ենք համարձակորեն դասել մեր անվանի դասականների երկերի շարքը՝ միանգամայն ինքնատիպ երանգներով ու կենսափիլիսոփայությամբ:

Ղարաբաղյան նիստ ու կացի, ղարաբաղցու բնավորության, ապրելու բանաձևի, կրած տառապանքների ու չմարող հույսի, հայրենասիրության, ընտանիքի սրբության, սեփական ցավն անտրտունջ տանելու, բարություն սերմանելու և այլ բարենասնությունների հրաշալի օրինակ է Մ. Առուշանյանը: Եվ դա էլ հենց նպաստել է նրա պատմվածքների բազմերանգության ցուցադրմանն ու կերպար-

ների բնական ապրումների դրսևորմանը: Կարևորում ենք ընդգծել Ղարաբաղյան կոլորիտ ստեղծելու նրա անժխտելի կարողությունը: Իհարկե, այստեղ պետք է նշենք նախ նրա շնորհքը, որ տրվում է ի վերուստ, միաժամանակ հայոց լեզվին տիրապետելն ու կոլորիտ ստեղծելու հմտությունը:

Կարդալով ու վերընթերցելով Մանվել Առուշանյանի պատմվածքները՝ ներքին մի մղումով համոզվում ես դրանցում: Ահավասիկ, նրա «**Թառը**» պատմվածքը: Երաժշտական այդ գործիքի պատրաստումից մինչև Վանես ամու ու Թաքի բիբու մինուճար Արտակի տիրապետումն այդ գործիքին, Արտակի և Ծովինարի ամուսնանալը երկար սպասելուց հետո, Արտակ անունով նրա որդու հասակ նետելը և վերջապես Թաքի բիբու կողմից մեծ Արտակի թառը փոքր Արտակին նվիրելը պատկերված են այնպես բանաստեղծորեն և այնքան համոզիչ, որ պատմվածքը կարդալուց հետո դեմդ հառնում է մի ամբողջ Արցախ՝ ավանդական իր սրբություններով և ապագայի հանդեպ ունեցած իր յուրովի հավատով:

Սերնդափոխության, ավազների և նորերի կենսահաստատ փոխհարաբերության, սուրբ նահատակների հավերժացած կյանքի խոստում պատկեր է պատմվածքը՝ իր փիլիսոփայական ավարտով: Թաքի բիբին զոհված որդու՝ Արտակի թառը նվիրում է փոքր Արտակին և ասում. «Առ, բալա ջան, մեծ Արտակից՝ փոքր Արտակին: Լավ կպահես», - զգուշացրեց նա, և աչքերը լցվեցին տաք արտասուքներով:

Ամեն երեկո գյուղով մեկ տարածվում է թառի տնկտնկոցը: Արտակը համառորեն նվազել է սովորում: Թաքի բիբին հեռվից լսում է ու սփոփանքով շշնջում. «Արտակս չեկավ, Արտակս կարճ ապրեց, բայց նրա թառը դեռ երկար կապրի» [10]:

Սովետական զինվորների սխրանքի մասին է «**Առաջին շքանշանը**» պատմվածքը: Այն գաղափարը, որ գերմանական ֆաշիզմի դեմ հաղթանակն ապահովվել է ԽՍՀՄ ժողովուրդների միասնության և դեպի ընդհանուր հայրենիքն ունեցած անձնուրաց սիրո զգացումի շնորհիվ, անմիջական և սրտապարտ պատմելաձևով ապացուցվում է այս պատմվածքում: Կոմպոզիցիոն ձևը այստեղ ևս ընտրված է բնականորեն: Դեպքերի մասին պատմում է պատմվածքի գլխավոր հերոսներից մեկը՝ ղարաբաղցի Արմենը: Նրա զինակիցը՝ ծագումով, ռուս, բայց Ուկրաինայի քաղաքացի Վանյան է: Արմենը հիացմունքով է խոսում իրենց գնդի հրամանատար Ջոլոտովի մասին, որն աչքի է ընկնում իր վեհանձնությամբ ու բարությանբ և զինվորներին գնահատում է ըստ նրանց ցուցաբերած սխրագործությունների:

Արմենն ու Վանյան ոչ միայն ընդգծվում են իրենց անօրինակ քաջությամբ, այլև, ինչպես ընդունված է ասել, գերմանական զինագնդերից «լեզու» բերելու կարողությամբ:

Այդպես էլ մի անգամ հաջողվում է բերել գերմանական բարձրաստիճան սպայի, որն էլ նպաստում է Ուկրաինայում ընթացող դաժան կռիվների հաղթական ավարտին:

Ըստ Արմենի պատմածի՝ իրենք ատելությամբ ու ցասումով մարտնչում էին գերմանական ֆաշիստների դեմ, սակայն կույր ատելությամբ չէին վերաբերվում գերի վերցված կամ առանձնապես վիրավոր ու անօգնական գերմանացի զինվորների հետ: Այսպես՝ Արմենը պատմում է, որ ճակատ առ ճակատ հանդիպում են ինքն ու գերմանացի զինվորը: Եթե ինքը դիպուկ չկրակեր, անպայման այդ

Ֆաշիստը կսպաներ իրեն: Սակայն տեսնելով այդ նույն հիտլերականին ծանր, մահաներձ վիճակում՝ Արմենը փաթաթում է նրա վերքը, փրկում մահից և ապա գերի վերցնում նրան:

Մ. Առուշանյանն ինչպես իր բոլոր պատմվածքներում, այստեղ էլ դեպքերը նկարագրում է սահուն, պատկերավոր լեզվով, դարաբաղյան գործոնի ընդգծմամբ: Արմենն իսկական արցախցի է, իր խիզախ նախնիների իսկական ժառանգորդը: Տխրության պահերին նա կարոտով է հիշում ծնողներին, մանկության ընկերներին: Եվ երբ նա իր խիզախության շնորհիվ առաջին անգամ արժանանում է «Կարմիր աստղի շքանշանի», հպարտությամբ քայլելիս կարծես նրա խորքում տեսնում է իր առաջին սիրո՝ Նունուֆարի սիրուն պատկերը: Արմենը նույն ապրումներն է տեսնում նաև իր ռուս ընկերոջ՝ Վանյայի հայացքում: Վանյան ևս արժանացել էր նույն շքանշանին:

1943 թվականն է: Ինչպես պատմում է Արմենը, «Քայլում ենք փոշոտ ճանապարհով» դեպի արևմուտք: Դղրդում են երկինքն ու երկիրը: Ասես փլվում է աշխարհը: Իսկ մենք հավատով քայլում ենք առաջ... դեպի հաղթանակ [11]:

Բանաստեղծական հուզալից մի ասք է «**Երագիս մեջ, երագիս հետ**» պատմվածքը: Հայրենական մեծ պատերազմի պատճառած կորստի, ցավի մասին է պատումը: Պատմողը դեպքերի ականատես-հերոսն է, որ ներկայացնում է երագի փոխված, երագ դարձած ավագ եղբոր մասին: Դեռևս պատանի՝ նա լսում է հոր զոհվելու լուրը, տեսնում մոր տառապանքը: Իսկ ավագ եղբորից լուր չկար: Բայց մի օր դուռը բացվում է՝ եղբայրն է վերադարձել՝ արկի բեկորից վիրավոր կրծքով: Հազում էր և արյուն քթում:

Պատումը շարունակվում է: Մ. Առուշանյանը հոգեբանի նրբանկատությամբ պատկերում է վիրավոր եղբոր այցելությունները գյուղի հարազատ վայրեր: Եղբայրն զգում էր իր մոտալուտ մահը: Ուստի պատվիրում է կրտսեր եղբորը, որ բահը վերցնի, որոշել է վայրակներ բերել, որ պատվաստներ անի: Այդպես էլ վարվում են: Երիտասարդ հասակում հայրենիքի հանդեպ կյանքի գնով իր պարտականությունը կատարելուց հետո ծգտում է գյուղում թողնել հիշատակ՝ ծառեր աճեցնելով: Ինչպես վկայում է պատմողը, նա ասում էր. «Աշխարհս ոչ ոքի չի մնա, բոլոր մարդիկ մահկանացու են: Բայց տղամարդը նա է, ով թեկուզ իր կարծ կյանքով մի այնպիսի գործ թողնի, որ սերունդները հիշեն»: Բայց հեղինակը դրանով չի ավարտում ասելիքը: Նրա զեղազիտական իդեալը այդ ծանր պահին պատերազմի ժխտումն է, որ մարդկությանը բերում է դաժան ցավ և անբուժելի մորմոք:

Միտքը նա արտահայտում է պատմող պատանու շուրթերով. «Սիրտս ճնվում է: Աչքերս մթնում են, և չեմ ուզում, որ եղբայրս հուշ դառնա և այդ հասակում հուշ թողնի սերունդներին» [12]:

Ինչպես հատուկ է Մ. Առուշանյանի գեղարվեստական հնարանքներին, այս պատմվածքը ևս ավարտվում է կոմպոզիցիոն շրջանակի ձևով, որն ավելի ազդեցիկ է դարձնում պատումը: Այն պատերազմի հասցրած ծանր կորուստների և մարդկային անանց կարոտների մասին է:

Կարդալով Մ. Առուշանյանի պատմվածքները՝ գրված պատերազմական տարիների իրադարձությունների, թիկունքում ապրողների ծանր սպասումների, կիսատ-պռատ ուրախությունների և այլնի մասին, զգում ես, որ նա այդ գործերը

գրել է նրանց անուհից, ովքեր ապրել են այդ ամենը, տեսել արհավիրքներն այն դաժան օրերի, զգացել իրենց մայրերի սրտակեղեք, բայց հուսալատ ապրումները՝ սպասելով անուսիմների կամ զավակների տունդարձին: Այդ զգացումների հոյակապ մի պատում է նաև «Չեմ ուզում» արձակ բանաստեղծությունը: Հայրը, որ պատերազմում կորցրել է իր հորը, չի ցանկանում աղջկա խնդրանքով կրկին վերհիշել պատերազմական տարիների կրած իր ցավալի պահերը: Բայց դատեր խնդրանքով նա հյուսում է իր հուշերի փունջը՝ թախծոտ, ծանր, համատարած մորմոքների երանգներով: Հիշում է պապին, տատին, արցունքոտ աչքերով մորը և անպայման իր ընկերոջը՝ Երվանդին: Եթե ինքը պապ ուներ, որ տրեխներ էր գործում իր համար, իսկ տատը՝ չալ տրիսետաններ, Երվանդը չուներ ոչ պապ և ոչ էլ տատ:

Աղջկա հայրը պատմում է իր ընկերական նվիրվածության մասին: Իր խնդրանքով պապը տրեխներ է գործում Երվանդի համար, իսկ տատը՝ չալ տրիսետաններ: Երվանդի ուրախությունը ցնծություն է բերում նաև իրեն, բոլորին, ովքեր այդ ծանր տարիներին սովորում էին ինստիտուտում: Պատումն ավարտվում է նրանով, որ Երվանդի հայրը պատերազմից հետո վերադառնում է՝ որդու համար բերելով հրաշալի ժամացույց: Իսկ Երվանդը, չմոռանալով ընկերոջ սրտացավ վերաբերմունքը, ժամացույցը նվիրում է նրան: Սակայն այստեղ արձակ բանաստեղծության ավարտը հուշում է միանգամայն այլ զգացում, որ պարզապես անեծք է պատերազմ հրահրողների հասցեին: Պատմում է հայրը. «Ու դողալով անցան ամիսներ: Հայրս չեկավ... Լսո՞ւմ ես, աղջիկս, հայրս չեկավ, և Երվանդը իր ժամացույցը կապեց թևիս:

Դու հասկանո՞ւմ ես: Ես արդեն որբացել էի...

Ինչո՞ւ ես լալիս: Ախր ինչո՞ւ ստիպեցիր, աղջիկս: Ես չէի ուզում պատմել: Չէի ուզում իզուր տեղը խռովել քո նուրբ հոգին: Թող քեզ թվա, թե կյանքը մի գեղեցիկ դրախտ է, թե աշխարհում ոչ մի տրտում մարդ չկա...

Էլ մի լսիր: Ես չեմ ուզում, որ իմանաս, թե ինչ է որբությունը, ինչ է պատերազմը... չեմ ուզում» [13]:

Մ. Առուշանյանը, ապրելով և աշխատելով հայրենի գյուղում, սերտելով հայրենի դարավոր օջախների կենսագրությունը, որպես գրող ասես դարձել է հեքիաթային այն իմաստուններից մեկը, որը ծանփորդներին մատնացույց էր անում ծիշտ ու անվնաս ծանապարհը: Նա եկավ այն եզրակացության, որ գյուղալքունը դարձել է մի այնպիսի վարակ, որն անբուժելի է դառնում ոչ միայն լքողի, այլև պապերից ժառանգած սուրբ օջախների համար: Ահա հենց այդ հիմնախնդիրն է շոշափում գրողը «Օջախի ծուխը», «Լեռները կանչում են» պատմվածքներում, որոնք նույնպես ապացուցում են նրա հոգեբան-գրող լինելու ճշմարտությունը:

Մ. Առուշանյանին կարելի է համարել գյուղական աշխարհի հմուտ նկարիչ: Արցախյան բնության նկարագրությունը, այդ բնության անփոխարինելի տերերի հուզաշխարհի նմանությունը իրենց ծնած ու սնած բնաշխարհին, գյուղի մարդկանց աստղալույս երազանքները, նոր ժամանակներում երիտասարդների սևեռումն հայացքները դեպի քաղաքային կյանքն ու պապենական օջախներից հեռանալը, ինչպես նաև նրանց վերադարձը հայրենի գյուղ, Մ. Առուշանյանը նկարագրում է հմտորեն, տազնապի ու լավատեսական զգացումների սեփական արյան կանչով: Այդ է ապացուցում նրա «Օջախի ծուխը» պատմվածքը, որի

գլխավոր հերոսը՝ Սամվելը, տեղափոխվում է քաղաք, վարժով ապրում քաղաքի ծայրում մեկ սենյականոց բնակարանում, ուր իր օջախի կարոտով տառապում է գյուղում հարգված իր Աստղիկ անունով մայրը: Հարազատ գյուղը հեռվից հանգիստ չի տալիս ոչ Սամվելին և ոչ էլ մորը: Կարոտը նրանց նորից բերում է հայրենի գյուղ՝ երջանկություն պարզևելով նաև Մեծ Հայրենականում ամուսնուն կորցրած մորը:

Նույն հարցն է քննարկվում նաև «**Լեռները կանչում են**» պատմվածքում: Հարազատ գյուղը լքած Լևոնը, ուղղակի անտեսելով պատերազմում ամուսնուն կորցրած մոր՝ Սոնայի թախանձանքները, որոշում է ընդմիջտ ապրել քաղաքում: Սակայն մայրը չի համակերպվում քաղաքային կյանքին: Վերջապես Լևոնը ևս ընտանիքով վերադառնում է գյուղ: Լեռների կանչը հանգիստ չի տալիս Լևոնին: Նրա վերադարձը գոհունակություն է պատճառում գյուղի բոլոր բնակիչներին:

Գյուղալքման խնդիրն այսօր ևս ցավալի երևույթ է դարձել: Մի շարք երիտասարդներ, ճիշտ չհասկանալով կյանքի բարդությունները, հեռանում են իրենց ծնողների շեն օջախներից՝ հեռավոր քաղաքներում բախտ որոնելու հույսով:

Կարդալով Մ. Առուշանյանի վերոնշյալ պատմվածքները՝ համոզվում ենք, որ գալու է պահը, երբ գյուղերը անհմաստ ու անհեռանկար լքողները մի գեղեցիկ օր պիտի վերադառնան հայրենական օջախներ, այցելեն այն գերեզմանները, որտեղ ննջում են իրենց հայրերը և «Օջախի ծուխը» պատմվածքի հերոս Սամվելի նման շնջան: «Ներիր, հայր, ներիր քո մոլորված որդուն... Ինչպե՞ս ձեռքերս չդողացին... Ինչպե՞ս քանդեցի քո ձեռքով կառուցած տունը, լքեցի հայրենի գյուղը... քո գերեզմանը: Ջղջում եմ, հայր և հիմա եկել եմ ընդմիջտ, շուրջս կհավաքեմ մեր հարազատներին, իմ ու հորեղբորս տղաներին, և Վանունց օջախի ծուխը նորից կբարձրանա հայրենի գյուղում [14]:

Մ. Առուշանյանի «Ծիածանը լեռներում» գրքի հետաքրքիր գործերից են «**Անտունի վեղարավորը**» և «**Գրագը տանուլ տվեցի**» պատմվածքները: Առաջինում գրողն անդրադարձել է Մեծն Կոմիտասի ստեղծագործական կյանքին: Գրողը խոսում պատկերներով ցույց է տալիս հայ դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասի աննախադեպ ջանքերը՝ հայ ժողովրդի աշխարհիկ երգերը հայտնագործելու և մշակելու ուղղությամբ: Միաժամանակ ընդգծում է 20-րդ դարի սկզբին դեռևս գործող խավարամիտ հոգևորականների անհմաստ դիմադրությունը մեծ երգահանին՝ այդ անհրաժեշտ գործընթացում:

Ինչ վերաբերում է «Գրագը տանուլ տվի» ստեղծագործությանը, գրողն այստեղ համոզիչ երանգներով հաստատում է ժողովրդական այն իմաստությունը, որ լավ ու նվիրված աշխատողին պետք է վստահել:

Կաթնապրանքային ֆերմայում հաշվետարի պաշտոն ստացած երիտասարդը չի վստահում հիսնամյա Գարեգին Աթայանին, որը երկար տարիներ աշխատել է որպես ֆերմայի վարիչ և արժանացել աշխատողների հարգանքին: Երիտասարդը ավելորդ դիտողություններ է անում, թե իբր Գարեգինը շռայլում է կաթնամթերքը: Ստացվում է այնպես, որ Գարեգինին նշանակում են կոլտնտեսության սղոցագործարանի տնօրեն: Եվ երիտասարդ հաշվետարը, գրագ գալով նախագահի հետ, փորձում է Գարեգինից գնել տախտակ՝ թաքուն: Սակայն Գարեգինը խստորեն մերժում է նրան:

Երիտասարդն, այսպիսով, գրագը տանուլ է տալիս:

## ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանվել Առուշանյան, «Ծիածանը լեռներում», պատմվածքներ, Բաքու, «Ազերնեշր», 1983, էջ 26:
2. Նույն տեղում, էջ 19:
3. Նույն տեղում, էջ 51:
4. Նույն տեղում, էջ 55-56:
5. Նույն տեղում, էջ 57:
6. Նույն տեղում, էջ 58:
7. Նույն տեղում, էջ 60:
8. Նույն տեղում, էջ 64:
9. Նույն տեղում, էջ 68:
10. Նույն տեղում, էջ 74-75:
11. Նույն տեղում, էջ 102:
12. Նույն տեղում, էջ 88:
13. Նույն տեղում, էջ 108:
14. Նույն տեղում, էջ 114:

### РЕЗЮМЕ

#### Творчество Манвела Арушаняна Сократ Ханян

В данной статье обсуждается и оценивается сборник рассказов одного из представителей союза писателей НКР Манвела Арушаняна (1925-2009) “Радуга в горах”. Отмечается, что данный сборник является осязаемым внедрением не только в литературное наследие автора, но и в историю прозы, созданной в Арцахе.

В статье обращается особое внимание на те рассказы, в которых отражены героическая борьба советских людей, в том числе и храбрых арцахцев против гитлеровских фашистов в годы Великой Отечественной войны.

Конкретными фактами отмечается, что М.Арушанян, творчество которого достойно тщательного исследования, является одним из ярких представителей психологической прозы.

### SUMMARY

#### Works by Manvel Arushanyan Socrat Khanyan

The given article discusses and analyzes the set of stories «Rainbow in the mountains» by the representative of the NKR Writer's Union Manvel Arushanyan (1925-2009). It is being pointed out that the given set of stories contributes not only to the literary heritage of the author, but also to the history of prose in Artsakh.

The special attention is paid to the stories which reflect the heroic struggle of the Soviet people, as well as the brave Artsakh people against the fascists during the Great Patriotic War.

Concrete facts underline M.Arushanyan's being a vivid representative of the psychological prose, whose works deserve thorough investigation.